Ապաշխարություն

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ Ա
Վստահ չեմ, որ արժե ապաշխարել:

- Մոսիա 26 գլխից կամ այլ սուրբ գրություններից ո՞ր գրություններով և սկզբունքներով կկիսվեիք, որոնք կարող են օգնել այս մտահոգության դեպքում:

Հիշեք, որ Ալման ևս նախկինում ծանր մեղքեր էր գործել և ապաշխարել էր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի միջոցով ներում էր ստացել (տես Մոսիա 11.5–7, 18.1–3, 26.15, 20):

- Ըստ ձեզ՝ Ալման ի՞նչ կասեր այս մտահոգությունն ունեցող մարդուն:

Խորհեք, թե դուք կամ ձեր ծանոթները ի՞նչ եք զգացել, երբ ապաշխարության միջոցով դիմել եք Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ Բ
Ինչո՞ւ պետք է խոստովանեմ մեղքերս: Ինչո՞ւ է անհրաժեշտ որոշ մեղքեր խոստովանել քահանայության ղեկավարին:

Տերն Ալմային ասաց, որ նրանք, ովքեր մեղանչել են, պետք է «խոստովանեն իրենց մեղքերը քո առաջ [Ալմայի՝ իրենց քահանայության ղեկավարի] և իմ [Տիրոջ] առաջ» (Մոսիա 26.29):

- Քանի որ Տերն արդեն գիտի մեր մեղքերը, ինչո՞ւ է կարևոր, որ մենք խոստովանենք դրանք Նրա առաջ: Դա ինչպե՞ս կօրհնի մեր կյանքը:

Երիտասարդներին զորացնելու համար գրքույկից և Յոթանասունի Բարձրագույն Իշխանության պատվավոր անդամ, երեց Ս. Սքոթ Գրոուի ելույթից կարդացեք ստորև բերվող խոսքերը և փնտրեք մտքեր, թե երբ և ինչու մենք պետք է խոստովանենք եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի առաջ:

Եպիսկոպոսը հայտնություն է ստանում Սուրբ Հոգուց իր ծխի անդամների, այդ թվում՝ ձեր վերաբերյալ: . . . [Նա] կարող է ապաշխարության միջոցով օգնել ձեզ այն ձևերով, որոնք ձեր ծնողները կամ այլ ղեկավարները չեն կարող տալ: . . . [Եթե մենք չենք խոստովանում, մենք] մենակ ենք կրում մեղքի բեռը, փոխանակ թույլ տանք, որ Փրկիչը վերցնի բեռը: (Ս. Սքոթ Գրոու, «Ինչո՞ւ և ի՞նչ պետք է խոստովանեմ իմ եպիսկոպոսին» New Era, հոկտեմբեր 2013, 28-29)

- Ինչպե՞ս կարող են այս խոսքերն օգնել մեկին, ով իր քահանայության ղեկավարի առաջ խոստովանելու վերաբերյալ մտահոգություններ ունի:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ Գ
Ես չափազանց շատ եմ մեղանչել, որպեսզի Տերը ների ինձ:

- Մոսիա 26.29–30 հատվածներում Տիրոջ բառերն ինչպե՞ս կարող են օգնել այս մտահոգության դեպքում: (Կարող եք ուսումնասիրել նաև Ա Տիմոթեոս 1.15 Ա Հովհաննես 1.9 կամ Վարդապետություն և Ուխտեր 18.10–12, 58.42–43 հատվածները:)

- Սուրբ գրություններում Փրկչի մասին ո՞ր պատմություններն են ցույց տալիս Նրա զգացողություններն այն մարդկանց հանդեպ, որոնք ձգտում են ապաշխարել, ինչպես նաև Նրա ներելու պատրաստակամությունը:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ Դ
Ձեր ընտրությունը

Մտածեք, թե ուրիշ ինչ իրատեսական մտահոգություն կամ հարց կարող է մարդն ունենալ ապաշխարության վերաբերյալ: Ուսումնասիրեք «Ապաշխարություն» կամ «Խոստովանություն» թեմաները սուրբ գրքերի ուղեցույցում (scriptures.ChurchofJesusChrist.org) և փնտրեք ճշմարտություններ, որոնք կարող են օգնել: Կարող եք նաև գտնել «Ապաշխարություն» կամ «Խոստովանություն» թեմաներին վերաբերող սուրբ գրությունները Թեմաների ուղեցույցում (ChurchofJesusChrist.org): Օգտակար կլինի նաև Երիտասարդներին զորացնելու համար գրքույկում ուսումնասիրել «ապաշխարությունը» և խորհել, թե ինչ գիտեք Տիրոջ մասին, որը կարող է օգնել:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_221-teacher_handout-1